

Հայտարարություն

«ՀՀ Արագածոտնի մարզի Թաթուլի Թ.Կրպեյանի անվան միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի տնօրինությունը հայտարարում է մրցույթ անգլերենի (6 դասաժամ) ուսուցչի թափուր տեղի համար:

Մրցույթն անցկացվում է 2 փուլով՝ թեստավորման և հարցազրույցի: Թեստավորման փուլը անցկացվում է ըստ ՀՀ ԿԳՄՍ նախարարության մշակած հարցաշարի: Հարցազրույցի փուլի հարցաշարը կազմում է հաստատությունը և յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցն անցկացնում առանձին:

Ուսուցչի թափուր տեղի համար մրցույթին մասնակցել ցանկացողները հանձնաժողով են ներկայացնում հետևյալ փաստաթղթերը՝

- 1.Դիմում (Ձև 1),մեկ լուսանկար 3×4 չափի,
- 2.Բարձրագույն կրթությունը հավաստող փաստաթուղթ(դիպլոմ),
- 3.Անձը հաստատող փաստաթուղթ,
- 4.«Հանրակրթության մասին»ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք աշխատավայրից և աշխատանքային գրքույկի պատճենը(առկայության դեպքում),
- 5.Ինքնակենսագրություն (Ձև 5),
- 6.Այլ պետությունների քաղաքացիները՝ ՀՀ-ում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ,
- 7.ՀՀ արական սեռի քաղաքացիները նաև զինվորական գրքույկ,
- 8.Հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր(առկայության դեպքում),
- 9.Որակավորման տարակարգ ունենալու դեպքում՝ հավաստող փաստաթուղթ:

Տնօրենի կողմից նշանակված պատասխանատու անձը փաստաթղթերի բնօրինակները համեմատում է պատճենների հետ և բնօրինակները վերադարձնում: Եթե ներկայացված փաստաթղթերի ցանկն ամբողջական չէ կամ առկա են թերություններ,մասնակիցը կարող է մինչև փաստաթղթերի ընդունման ժամկետի ավարտը վերացնել և համալրել դրանք:

Փաստաթղթերն ընդունվում են մինչև սեպտեմբերի 24-ը ներառյալ,ամեն օր՝ ժամը 10:00-ից 15:00-ը,բացի շաբաթ,կիրակի և այլ ոչ աշխատանքային օրերից:

Մրցույթը տեղի կունենա սեպտեմբերի 30-ին՝ ժամը 13:00-ին,ՀՀ Արագածոտնի մարզի Թաթուլի Թ.Կրպեյանի անվան միջնակարգ դպրոցում.հասցեն՝ Արագածոտնի մարզ,գյուղ Թաթուլ փողոց 12, շենք՝ 2:

Տեղեկությունների համար զանգահարել 094-82-78-18 հեռախոսահամարով:

